և ոչ պիտի բլլայ, ինչպէս որ մեզ հաստատ մարդարէացան. որովհետև անհաստատութեան մէջ մնացած է մի չհաստատուած անոր, այլ եւ կ'ուրանամ եւս զինքը։ Բայց Իսմէէլ եւս գրեր է Ն. «Երբ կիներն պատկեցաւ դեռնեին վերայ ու ծնաւ, բայց Աստուած. հնկանոզ անուանը չաղաղանած դիր, որով հեռաւ այս ժողովրդիս չպիտի ազատիմ»(1)։ Եւ թէ Աստուած մեկդի թողաց զմեզ, ըսել է որ մեզ ալ չպիտի ազատի, ինչպէս որ փորձն առինք հաղար տարիէն աւելի է. ապա ուրեմն օրէնքը, թլփատութիւնն ու շաբաթը պահելնէս մեզ ինչ օգուտ պիտի բլլայ։ «Այդ ժողովուրդն հանեց», բայց Յայտի ԽԳ. գլխուն մէջ(2). ինչպէս որ հաղար տարիէն աւելի է որ հանեց զմեզ մեր երկրէն Ճշմարիտ ու փառաւոր Աստուածը։ Նոյն մարգարէն բայց դարձեալ ԻԸ. գլխուն մէջ. «Հին մոլորութիւնն անցաւ»(3). և ինչ է հին մոլորութիւն բաւը, եթէ ոչ մեր օրէնքն՝ որ թագաւորութեան, զոհին, խնկոյն և սեղանոյն հետ մեկտեղ հեռացաւ մեզմէ, Տէր իմ. և աւելի փառ բան մի ինչ կրնայ մեզ պատահիլ։ Եւ ինչ է այս մեր քաշածը. գուցէ չէք տեսներ որ աշխարհս չարս կողմը ցրուեր եմք, ինչպէս ըսին մեզ Մովսէս, Երեմիա և Յայտի և ուրիշ մարգարէք։ Եւ տակայն Աստուծոյ եմք մեք, և անոր կը դիմեմք ամեն դէպքերու մէջ։

Ի յաջորդն։

(1) Յիշցաւ միւսանդամ և ծնաւ դուստր. և ասէ ցնա. կոչեա զանուն նորա Հոգոբանաց. զի ոչ եւս յաւելից ազգքանել զամենն Իսրայէլի։ ԸԷ. Ն. 6։

(2) Հանի զժողովուրդ կոյր։ Եւ. ԽԳ. 8։

(3) Ի յա վիպոյթիւնս հինգ։

Ժ. ԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ընդհանուր ամսոյ 27 թիւ գիշերը Ճրագալուսաւորութեան հանդէս կատարուեցաւ ուրբաթաթիւ մէջ Տրբին Կայսերական Ինժանիրութեան Սպասիր Ազգ օգնասիրաց Բարեգործ Ճանապարհորդութիւնէն ազնիւ ի մոլորեալներն դառնալուն բարեպատեհ առթիւ։ Հատարակաց ուրախութիւնը և այն ճանապարհորդութեան առթիւ մեծազօր Ինքնակալին բարի և կենդանարար ողորմութիւնց վերայ դէպացած ակնկալութիւնները կարծես թէ եղած հանդէսին հոգի և կենդանութիւն կուտային։

— Պաղեստինու երկրին նեբբին կողմերը դէպ ի արեւելք Յորդանան գետոյն եղերքներէն սկսեալ դէպ ի այս կողմն և այն՝ վրանաբնակ ազգեր ու ժողովուրդներ կը բնակին, որոնք իրենց մէջ զանազան անուամբ կ'որոշուին, բայց հատարակ անուամբ ալ Արաբայիք կը կոչուին։ Օրմանեան ազգութեան ապաստամբք են միշտ, ոչ տուրք կուտան և ոչ զօրք. սակայն իրենց մէջ տեսակ մի տանուտիրական իշխանութիւն ունին, և իրարանցիւր ժողովուրդ Շէյխի մի հրամանաց ներքեւ կը գտնուին միշտ. նորա հպատակ են և նորա համար իրենց կեանքը կը զոհեն։ Թէպէտ եւ հատատուն բնակութիւն չունին, այսու ամենայնիւ երկրագործութիւնն իրենց մէջ լաւ բաւական ծաղկեալ է. և իրենց գլխաւոր հարստութիւնն է, արջառ, ոչխար, ուղտ, բամակ և պատուական նժոյգ (քէօհլան) որ անուանի են բոլոր աշխարհս մէջ։

Ասանք, ինչպէս որ ըսինք, զանազան շէյխութեան բաժնուած լլլալով, վէճն ու կռիւն ալ միջերնին պակաս չէ եղած, և իրենց այն անպաշտպան կե-

digitised by A.R.A.R.@

նայ մէջ ապաս իւնութիւնին գէնքն ուձին ըլլալով առանց բացառութեան ամենքն ալ սոխպուած են գէնք բանեցընելու և հեծելութեան վարժուելու։ Բանի մի ժամանակէ ի վեր Դերեկու և Սալդի կողմերն եղող վանական արաբաց երկու Հէխերու մէջ թշնամութիւն ծագած էր, և Սալդի բնակիչք եւս իրենց Հէխովը անոնց մէկուն հետ կուսակցութիւն ունենալով՝ կռուոյն մասնակից էին։ Այն միջոցին էր Ի. Դունէն սատիկ հրամաններ եկան Դամասկոսի Միւշիր Մէհմէտ Բիշամ փաշային և զօրաց հրամանատար Տերվիշ փաշային, որ բաւական զօրքով յիշեալ ապառամբ ցեղից վերայ յարձակելով հնազանդեցնեն, առվարական տուրքերն ժողովեն և այն կողմերը լաւ կարգ քաղաքական կացութեան և բարեկարգութեան մէջ մտցընեն։ Յիշեալ Միւշիր փաշայն նոյն միջոցին տեղւոյս Վսմ. Նազիֆ փաշային եւս հեռագրով իմաց տալով, ամենայն առաջին օրը 400 զօրք ասկէ և 4000 զօրքի չափ Դամասկոսէն սկսան յառաջ երթալ դէպ ի Սալդի և Դերեկու կողմերը, որ Յորդանանու մուս կողմը կը գտնուին. իսկ ասկէ գեաղող զօրքը գեռայն այս դիու կողմը բանակեցան, որպէս զի ապառամբաց դեռանէն ետեղեն արդիլեն։ Այս օրինակ մեծ պատրաստութեամբ եղած յարձակումն տեսնելով՝ շատերը հնազանդեցան և եկան Վսմ. Միւշիր փաշային մօտ իրենց հպատակութիւնը ցոյց տալու. բայց Հէխ Տիաբ՝ որ գլխաւոր ու զօրաւոր է Հէխերու մէջ, զօրաց մնացեալը խմբելուն՝ 100 ուղղ ցրեն և ուրիշ կահեր բեռնաւորելով կը փախչի դէպ ի նեղս անապատն իրեն համախոհիցը հետ։ Միւշիր փաշայն մարդ խրկեց իւրեան որ գոյ հնազանդի և իւր Թողուցած ընչիցն եւս տէր ելլոյ. բայց երբ Հէխ Տիաբ իւր կենաց ազատութեան վերայ կասկածելով չուզեց դալ ի հնազանդութիւն, փաշա մի զօրք եւս ուղարկեն խրկուեցաւ որ բռնեն բերեն զինքը. իսկ նա աւելի նեղսերը փախչելով, և արքունի զօրքերը տեղւոյն անցքութիւնէն և դժուարութենէ սոխպեալ՝ յետ դարձան։ Յիշեալ Հէխին Թողուցած ցրուեն, եթէ չափազանցութիւն չկայ, հարիւր հազար չափ է կ'ըսեն, որոնք հոլերու մէջ դիպուած են։ Անոնք ամենն ալ յարբունիս գրաւեցան առայժմ, նոյնպէս և ուրիշ հարստութիւնք, զոր փախչողները գետնի տակ թաղեր էին։ Կ'ըսուի թէ Վսմ. փաշայն բազմաթիւ նոր գերեզմաններ տեսնելով այդպէս այնդին, և զարմանալով քանի մի օրուան մէջ այսքան մարդոց մեռնելուն, կասկածի կ'երթայ, և զանոնք փորել տալով բոլոր փախչողներուն գոյքն ու ապրանքներն անոնց մէջ թաղուած կը գտնէ։

Աղբուրի բանակը՝ որոց թիւը եօթը հազարի հասած է, զբաղած է առայժմ սեռամբ սկիզբն տալու զօրանոցի մի հիմնարկութեան Սալդի մէջ. և մինչև Այրուսաղէմ, ինչպէս կ'ըսեն, ամեն կէս ժամու հեռաւորութեամբ մէկմէկ աշտարակ պիտի շինուի պահպանն զօրաց համար, ինչպէս արդէն շինուած կան ասկէ մինչև ի Յորդան։ Այսմ ապն միջոցներով բարեկարգութիւններ հաստատուելու ըլլան այն կողմերը, ինչպէս որ կը յուսամք բարեխնամ մեծապէս Տերութենէն, ապահովութիւնը կը տիրէ Աղբաց մէջ, ճանապարհորդութիւնը կը դիւրանայ, երկիրը՝ որ արդէն բարեբեր է, աւելի եւս կը ծաղկի մշակութեամբ և երկրագործութեամբ, և Տերութեան դիմաց կը բացուի հարստութեան նոր դուռ մի. ինչպէս

digitised by A.R.A.R.@

և տրդէն սկսուած է հնազանդեալ ս-
բաբաց գլխաւորներուն ձեռօք արոց
հաւաքումը։

Գերեկու և Սպդի օդը խիստ գե-
ղեցիկ է, և ջուրերն առատ և պատ-
ուական։ Առաջնոյն մէջ Կիլիկեցւոց
Ժամանակ և սակէ դրեթէ հարիւր
տարի առաջ բաւական հայք կային,
և տուրք Աթոռոյս թեմը կը համա-
րէին. իսկ Աբաբաց բռնութենէ երե-
սի վերայ թողլով զանոնք և անոնց հո-
գեւոր պիտոյից համար կարգաւոր չկա-
րենալով խրկել հոն, ստիպուած են
ամենքն մէկէն Յունաց եկեղեցւոյն
յարիլ։ Յաղուրդք գիտեն Հայոց
ցեղէ ըլլալնին, որոնցմէ մին անցեալ
տարի իւր տրոր փոքած Ժամանակ քա-
րեաց դուռ մի կը գտնէ, և մէջը մրա-
նելով կը տեսնէ որ պատուական եկե-
ղեցի մի է անեղծ մնացած. պահարան
մի կը բանայ և քանի մի գիրք կը գըտ-
նէ հոն հայերէն գրերով, և բոլը կը
պահէ զանոնք առանց տալու Յունաց
ոչ գիրքերն և ոչ եկեղեցւոյն տեղը զոր
խնդրած էին։ Կը պատմեն թէ յիշ-
եալ անձը և այլք մեծ համակրութիւն
ցոյց կուտան Հայոց վերայ, և պատ-
րաստ են իրենց մայրենի եկեղեցին կրը-
կին դառնալու։ Այս կը յուսամք որ մե-
ծազոր Տէրութեան շնորհիւ ձամբա-
նելը դիւրանալուն, նոցա վերադարձն
ալ կը դիւրանայ, եթէ մեր կողմէն
նախանձաւորութիւնն ու կամքը նոցա
համակրութեան պատասխանելու ըլ-
լայ։

Սուրբ քաղաքիս արքունի զօրաց
Սպդի վերայ յարձակումը ցաւալի
դէպքի մի պատճառ տուաւ։ Այն օ-
րը երբ զօրախումբը Ռեթանիայէն
կ'անցնէր, գիւղերին մէկը թղենեաց
պարտէզ կը մնէ քանի մի թուզ քա-
ղելու համար, պարտէզին տէրը որ
Ֆելլահ մի էր, սատակի պօռալով
նորա դէմ, զօրաց առաջնորդ Հաճի
Ալի էֆէնտին կ'իմանայ զայն, և դէպ ի
պարտէզը ձիով յարձակած ժամանակ,
ձիուն ոտքը քարաժայռի մի վերայ յան-
կարծ սահելով, տապատ գետինը
կ'ինկնի և ոտքը չարաչար կը խորտակի.
և վիրաբոյժք չկարենալով դարման տա-
նիլ, շրջրջդ օրը մեռաւ, զոհ երթա-
լով գիւղերի մի անզուսպ որկրամ-
ոլութեան։

— Սուրբ Յարութեան գմբէթին
նորոգութեան սկսուիլը արդէն ծանու-
ցած եմք մեր ընթերցողաց, որ բոլոր
երկաթէ պիտի ըլլան, և Գոդոլոյ ձու-
լարաններուն մէջ թափուելով՝ այս
անգամ սկսան գալ ի Յոպպէ, և ար-
դէն իններուն բեռի չափ հասան հոս.
և կ'ըսուի թէ ընդամենը հազար ու դ-
ար բեռ են։ Կը յուսամք որ սուրբ
Օգոստին առաջ բոլորովին կը լրանայ
յիշեալ գմբէթին նորոգութիւնը, որ
քանի մի տարիէ ի վեր է աւերեալ
ըլլալուն՝ անլուծելի խնդիր մի եղած էր։

— Սոյգ աղբիւրներէ կ'իմանամք
թէ Յոպպէէն մինչեւ Այշրուսաղէմ
կառուցի պիտի շինուի Ի. Գրան կողմէն
եկած հրամանաց համեմատ. և
թէ այն գործին տեսչութիւնը քաղա-
քիս զօրաց հրամանատար Պաշա. Լ ի-
վա փաշային յանձնուած է, և թէ այն
պատճառաւ յիշեալ Պաշա. փաշայն
Մինչեւ Փաշային քով գնաց ի Սպդ,
եւ նա դառնալուն պիտի սկսուի։
Բաղդը է մեզ յուսալ. որ այս ան-
գամ անպատճառ ի գործ կը դրուի
համեմատ բարձր հրամանաց Տէրու-
թեան։

digitised by A.R.A.R.@